

«ԳՈԼԴԵՆ ԱՅ ԱՈՒԴԻՏ»

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ք. Երևան, Մալաթիա փողոց, տուն 16

N: 7 06.04.2010թ.

Անկախ աուդիտորի եզրակացություն

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ

2009թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ԱՓԲԸ 2009 թվականի ֆինանսական հաշվետվությունները: Նշված ֆինանսական հաշվետվությունների կազմման համար պատասխանատու է կազմակերպության ղեկավարությունը: Մեր պարտականությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք աուդիտն անցկացրեցինք աուդիտի ստանդարտների (աուդիտի ազգային ստանդարտներին և գործնական փորձին) համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք աուդիտը պլանավորենք և իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվությունները էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով: Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվության և բացահայտումների հիմքերի հետազոտումը՝ թեսթային հիմունքներով, այն ապացույցների հետազոտումը, որոնք հաստատում են ֆինանսական հաշվետվություններում արտացոլված տեղեկատվությունը և բացահայտումները: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների, կազմակերպության ղեկավարության կողմից կատարված էական գնահատումների և ֆինանսական հաշվետվությունների ներկայացման գնահատումը: Աուդիտն իր մեջ ներառում է ընտրանքային կարգով իրականացված այն փաստաթղթերի հաշվեքննումը, որոնք թույլ են տալիս գնահատել հաշվետվություններում և այլ ֆինանսական փաստաթղթերում բովանդակող տեղեկությունների հավաստիությունը: Մենք գտնում ենք, որ իրականացված աուդիտորական աշխատանքների արդյունքները բավարար հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները կազմակերպության ֆինանսական վիճակի՝ առ 31-ը դեկտեմբերի 2009թ., դրությամբ, տալիս են ճշմարիտ և իրական պատկերը:

«ԳՈԼԴԵՆ ԱՅ ԱՈՒԴԻՏ» ՍՊԸ

տնօրեն Է. Ամատյան



Աուդիտոր

Ա. Մովսեսյան